

«կայսերական Մեծութեան ամենահաւատարիմ, ամենահնազանդ եւ ամենախոնարհ ծառայ»,

(Հասցէ)

«Առ ամենազօր եւ անյազլթ մոսկովեան սուսայ եւ այլ ժողովրդոց Օդոսսափառ Կայսր», (ԱՐԱՐԱՏ պաշտօնաթերթ ամսագիր էջմիածնայ, 1915 Սեպ.-Հոկ. էջ 780-781):

Պրոֆ. Աշոտ Յովհաննէսեան այս զրուիւնը, հակառակ որ անստորագրի է, կը վերագրէ Յակոբ Ջուղայեցիին:

Ատիկա խիստ տարակուսելի է: Հաւանական չէ որ իր կարծածին պէս «կաթովիկ քարոզիչներ» հայերէնէ թարգմանած կամ պատրաստած ըլլան զրուիւնը ուր Յարին կ'ըսուի թէ զրոյը «մօտենում եմ նաեւ իւր (Աստուծոյ) թագաւորութեան մէջ Նրա (Աստուծոյ) տեղապահ Կայսեր»: Կաթովիկ քարոզիչներ պիտի խրոչէին նման բան մը զրեւէ ոչ կաթովիկ վեհապետի մը մասին:

Թուղթը կասկածելի է որովհետեւ հասցէ չունի: Կը պահսի Յարին (կայսեր) անունը: Կը պահսի նաեւ ստորագրութիւն: Եթէ հայերէն հասցէ ունեցող եւ ստորագրութիւն կրող բնագրէ մը թարգմանուած է, այն ատեն ի՞նչ զօրծ ունի կաթովիկոսական պաշտօնական կնիքը թուղթին սկիզբը: Կաթովիկոսական պաշտօնական կնիքը պէտք է գտնուէր բնագրին զլուխը, հասցէով, ստորագրութեամբ, տեղով եւ թուականով բնագրի զլուխը եւ ոչ թէ թարգմանութեան մը վրայ: Նոյն խնի մենք կարելի կը զբտնենք լատիներէն նման բնագրի պատրաստութիւնը էջմիածնայ մէջ (թէեւ մերթելով լատին կամ կաթովիկ քարոզիչներէ կատարուած ըլլալը): Էջմիածին կը գտնուէր Ստեփաննոս Լեհացի թարգմանիչ եւ մատենագիր վարդապետը: Սակայն ինչո՞ւ լատիներէնը առանց հասցէի եւ առանց ստորագրութեան ըլլար, երբ կաթովիկոսական պաշտօնական կնիք ունէր իր ճակտին:

Հաւանաբար ըսուի մեզի թէ «կոնսպիրացիայ» կայ: Այսինքն իբր թէ կաթովիկոսը զազանապահութենէ մղեալ, Յարին անունը չէ հասցադրած... եւ ինքն

ալ չէ ստորագրած որպէսզի, եթէ թուղթը թշնամի պարսիկներուն ձեռքը իյնայ յանկարծ, իր զլխուն փորձանք մը չդայ: Շատ բարի... այն ատեն ինչո՞ւ կաթովիկոսական անպարտկելի պաշտօնական կնիք... Միթէ ատիկա խնի պիտի չբաւէ՞ր կաթովիկոսը փորձանքներու եւ մահուան մատենելու:

Որքան որ հայերէն բնագիր մը մէջտեղ չկայ, որ կարեւոր է վաւերաթուղթը արժեւորելու համար, ես կը միտիմ խորհելու որ հոս կեղծիքի մը հետ զօրծ ունինք: Որեւէ միջոցաւ կաթովիկոսական պաշտօնական կնիքով թուղթ մը ձեռք բերուած է եւ անոր վրայ զրուած է իբր թէ այս թարգմանութիւնը: Կեղծիքը կրնայ պատրաստուած ըլլայ Մոսկուայի մէջ: Կնիքին 1655ը կապ մը չունի կեղծիքին թուականին հետ: Կնիքը Յակոբ Ջուղայեցիին կաթովիկոսանալուն թուականը կը կրէ եւ անոր գտնազան թուականով բոլոր նամակներուն եւ կոնգակներուն վրայ կ'երեւի, ինչ որ սովորական էր:

Ո՞վ եւ ինչո՞ւ համար կրնար նման կեղծիք մը պատրաստել:

Կարելի է խորհիլ որ Բարայէլ Օրին հարկ տեսաւ նման կեղծիք մը պատրաստել իբր թէ Յակոբ Ջուղայեցիէ պատրաստուած եւ իր մահուամբ իր գործին շարունակող Օրբի վիճակուած՝ Յարին բերելու համար դայն: Օրին կրնար կերպով մը ձեռք անցուցած ըլլալ կաթովիկոսական պաշտօնական կնիքով կնքուած այս թուղթը: Անոր անպարզ եւ անպահանջ վիճակը նոյնպէս յաւելեալ կռուան մըն է ստոր կեղծիք մը ըլլալուն: Կրնայ ըլլալ որ Օրբի իր այս կեղծիքը պատրաստեց երբ դէպի Յարը դարձուց իր յոյսն ու ակնկալութիւնը: Կրնայ ըլլալ որ բարդութիւններէ վախնալով, չզօրձածեց կեղծիքը, որ վերջը իր թուղթերուն մէջ գտնուեցաւ եւ արքունի դիւանին անցաւ:

Լոկ կնիք մը պիտի չբաւէր նման վտանգաւոր ձեռնարկ մը. Ջուղայեցիին վերագրելու:

Ջուղայեցին լոկ եռանդուն եկեղեցական մը կ'երեւի, նուիրեալ Լուսաւոր-